Հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի

պրոռեկտոր Է. Ասրիյան

«10» 11 2020թ.

Կարծիք

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար *Վիոլետտա Մերգեյի Մանուկյանի <<Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները>>* թեմայով ատենախոսության վերաբերյալ

հաստատվել է

ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի 2020թ. ***նոյեմբերի 4-ի առցանց նիստում:*** *Նիստին մասնակցում էին քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ. Քեռյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Մարգարովը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Մանուկյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Հ. Շափաղաթյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Ա. Ղևոնդյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Ն. Գալստյանը, պատմ. գիտ. թեկնածու, դոց. Մ. Սողոմոնյանը , քաղ. գիտ. թեկնածու Ց. Ակոպյանը, պատմ. գիտ. եկնածու, դոց. Լ. Հովսեփյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Հ. Մկրտչյանը, ասիստենտ Մ. Ալիխանյանը:*

Վիոլետտա Մանուկյանի ատենախոսության թեման արդիական է, որովհետև չճանաչված պետությունների հիմնախնդրի վերլուծությունը՝ միջազգային փորձի հետ համադրմամբ հնարավորություն է ընձեռում մի կողմից քննարկելու ինքնորոշման հարցի և սեփական պետություն կառուցելու խնդրի արդիականացման հնարավորությունները ժամանակակից քաղաքական գործընթացների համատեքստում, մյուս կողմից՝ դիտարկելու դրա արդյունավետության բարձրացման միջոցները՝ հաշվի առնելով ներկա համաշխարհային գործընթացների կերպափոխումները: Այս հետազոտությունը հնարավորություն է տալիս դիտարկել պետականության ձգտող էթնոսների ձգտումների դեմ պայքարող պետությունների քաղաքական էլիտաների

արժեքային տարբերությունները, ընկալումները: Թեմայի կարևորությունը և արդիականությունը պայմանավորված է նաև ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կատարելագործման, ազգային անվտանգության ապահովմանն ուղղված գործունեության արդյունավետության համար կիրառական առաջարկություններ մշակելու և Արցախի միջազգային ճանաչմանը հասնելու համար: Կարևորում ենք հիմնախնդրի ուսումնասիրության ինչպես գիտական, այնպես էլ մեթոդաբանական ասպեկտները: Արտաքին քաղաքականության և անվտանգության ապահովման համակարգում առաջնայինը մնում է այդ խնդրի լուծումը և կարևոր է ստեղծել բարենպաստ պայմաններ՝ նվազագույն ուժերով ապահովել անվտանգությունն ու հնարավորինս պարզել արդի մարտահրավերները:

Ատենախոսության նպատակները՝ գիտական են: Ատենախոսը գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրել է պետությունների կայացածություն հասկացությունը, հիմնական մոտեցումները և գնահատման մոդելներն ու մեթոդները, զուգահեռ բացահայտելով ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման մակարդակի և միջազգային ճանաչման միջև կապը/կապի բացակայությունը: Հաջողությամբ վերլուծվել է հետկոնֆլիկտային փուլում պետության կառուցման գործընթացի առանձնահատկությունները և մարտահրավերները, ներկայացնելով նաև չճանաչված պետությունների կայացածության գնահատման հնարավորությունները և խնդիրները:

Իր առջև դրված հետազոտական խնդիրների իրականացման ընթացքում, հեղինակը կիրառում նոր մեթոդներ: Նորովի մոտեցում ենք համարում նաև այն, որ նա ներկայացրել է Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստրի և Արցախի կայացածության քանակական գնահատականները և իրականացրել որակական գնահատումն ըստ քաղաքական, տնտեսական, սոցիալական և անվտանգության ոլորտների:

Ատենախոսությունում որպես նորույթ առկա են մոտեցումներ, գաղափարներ, տեսական ընդհանրացումներ և առաջարկություններ, որոնք կոնկրետ ձեռքբերումներ են Հայաստանի քաղաքական գիտությունների բնագավառում: Դրանցից հարկ ենք համարում նշել «պետության կայացածություն» եզրույթի

հայեցակարգային և գործառութային սահմանումը, միջազգային կոնվենցիաների նորովի դիտարկմամբ ինքնորոշման իրավունքի և ինքնորոշված պետության ճանաչման կապող գործընթացի լուսաբանումը: Բավականին հիմնավոր հետազոտվել է պետության «չճանաչված» կարգավիճակից բխող մարտահրավերների համախումբը և հետազոտվել է հետկոնֆլիկտային փուլում պետության կառուցման առանձնահատկությունները, առանձնացվել են այդ առանձնահատկությունների վրա ազդող գործոնները:

Արժևորում ենք նաև և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների կայացածության գնահատման, կառուցմանն ու կայացմանը վերաբերող մոդելի՝ «Խաղաղության ցուցչի», մշակումը, որի օգնությամբ գնահատվել են հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունները: Կարծում ենք, որ այս մոդելի օգտագործումը կդյուրացնի գիտական շրջանակներում «պետության կայացածություն» հասկացության գիտական ըմբռնումը: Պետության կայացածությունը գնահատող ինտեգրալ մոդելը՝ «Խաղաղության ցուցիչը», ատենախոսությանը օժտում է կիրառական նշանակությամբ: Քանի որ, չճանաչված պետությունների շուրջ որպես կանոն ստեղծվում է փխրուն անվտանգային միջավայր, նման առաջարկները հնարավորություն կտան պայքարել անվտանգության սպառնալիքների և ապակայունացման դեմ՝ նպաստելով խաղաղության հաստատմանը (այստեղից էլ մոդելի անվանումը): Համաձայն ենք ատենախոսի հետ, որ մշակված մոդելը կարող է կիրառում ստանալ ինչպես գիտահետազոտական, այնպես էլ պետական կառավարման ոլորտներում:

Առկա է էմպիրիկ ուսումնասիրության արդյունքների զուգորդում սեփական վերլուծության հետ՝ առանձնացվել են նաև չճանաչված պետությունների շուրջ առկա կոնֆլիկտայի քաղաքական գործընթացների կարգավորման հիմնական միտումներն ու հեռանկարները: Հատկապես արժևորում ենք այսպիսի հակամարտությունների կարգավորման միջազգային փորձի Ղարաբաղյան կարգավորման գործում տեղայնացման հնարավորությունների հետազոտությունը: Միջազգային հարթակներում ազգային շահերի պաշտպանության առումով հրատապ է ինքնորոշման իրավունքի հիմքով այլ հակամարտություններին տրված լուծումները և այդ փորձի կիրառման հնարավորությունները:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են արտաքին քաղաքականության վերլուծության համար անհրաժեշտ գիտական վերլուծական նյութեր, պետական պաշտոնական այլ կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթերը:

Հետազոտության գիտական նորույթը ձևակերպված է առանձին դրույթներով, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Ատենախոսության եզրահանգումները գիտական են և օգտակար Հայաստանի քաղաքական գիտությունների համար: Ատենախոսությունում առկա գիտական հետազոտության արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ հեղինակը կարողացել է գիտական խնդիր է առաջադրել, ինչը որ թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող առաջնային պահանջներից է:

Վիոլետտա Մանուկյանի ատենախոսությունն ունի նաև որոշակի թերություններ.

1. Ատենախոսության թերևս առավել ակնհայտ թերություն է այն, որ առկա է հետազոտության թեմայից որոշակի շեղում և տեսական հարցադրումներով աշխատանքի անհարկի ծանրաբեռնում, որն իր հերթին որոշակի անհամապատասխանություն է առաջացրել հետազոտության թեմայի և բուն նյութի միջև: Ատենախոսության չորս գլուխներից երեքը վերաբերվում են մեծ ու ծավալուն թեմաների (պետության կայացվածության հատկանիշներ, նրա կապը ազգերի ինքնորոշման իրավունքի և հետկոնֆլիկտային առանձնահատկությունների հետ և այլն), որոնք միայն ընդհանրական կապ ունեն հետխորհրդային չճանաչված պետությունների կայացման առանձնահատկությունների հետ: Իհարկե այդ հատվածներում հեղինակը գիտական ուսումնասիրություն կատարել է, բայց կամա թե ակամա շեղումն ակնհայտ է :

2. Ատենախոսության գիտականությանը զգալիորեն վնասում է հանրահայտ իրողությունների պարզունակ ներկայացումը հղումներով, որը բավականին հաճախ է հանդիպում և բացասաբար է ազդում աշխատանքի ընկալման վրա: Օրինակ, էջ 155 – ում անվտանգության ապահովման մասին արված է հարցադրումը, կամ էլ էջ 162-ում ենթահարցի առաջին նախադասությունը ,,Կայացած պետությունը պետք է ի զորու լինի բավարարել հասարակության ակնկալիքները,, և սրա վրա դրված է թիվ 343 հղումը: Ցավոք

ատենախոսության մյուս հատվածներում ևս նման դեպքերի ականատեսն ենք լինում:

3. Հետխորհրդային չորս պետություններ հետազոտվում են որպես չճանաչված, այնինչ 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո Հարավային Օսեթիայի և Աբխազիայի կաչգավիճակը փոխվեց և նրանք դարձան մասնակի ճանաչված: Կարիք կար այս հանգամանքը դարձնել առանձին հետազոտության առարկա, թեկուզ մեկ ենթագլխով:

4. 193-194 էջերում առկա աղյուսակում չորս պետությունների անվտանգության ցուցիչների մեջ Արցախին տրված է 25 միավոր, մյուսներին կրկնակի քիչ: Մեր կարծիքով ներկա պատերազմը արդեն հարցականի տակ է դնում այս հետևությունը:

ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է որ, այս թերությունները չեն զցում ատենախոսության գիտական արժեքը և ***Վիոլետտա Սերգեյի Մանուկյանի <<Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները>>*** թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ԻԳ.00.02 **<<Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ>>** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

ԵՊՀ քաղաքական ինստիտուտներ և գործընթացների ամբիոնի վարիչ

քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր _____ **Գ.Մ. Քեռյան**

Քաղ. գիտ. դոկտոր Գ. Քեռյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար,

պատմ. գիտ. թեկն., _____ **Լ. Հովսեփյան**

«10» 11 2020թ.